



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 45

— ՀԱՐԱՐԻ —

5 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԳԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖԸ.
Վեցամսեայ 25	Վեցամսեայ 27	Վեցամսեայ 6

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

Մ Ս Ս Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեյսյ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղղորդութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ Զենիթը՝ թէ՛ Կ. Պոլիս, եւ թէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գիտացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — Զենիթ ժամացոյցները Բաբիգի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենէն բարձր պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت مرتبه مطبعی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հաստիսի թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹՈՒՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԹԱՅԹԱՆ
ՄԱՍՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐԱ.

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ.

- (1. Սուլթան համամ .
(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՏԱՐ.

Չարչը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզդուլուի տունը:

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԴԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Դրամագումար եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԴԵՂԻ ՃԻԻՂ

Դրամագումար եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և
կարասիք:

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը
մարդկային կեանքի վրայ:

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ

Գ. Ֆ Է Ր Ա Տ Ե Ա Ն



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 45

ՇԱԲԱԹ

5 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քիչ մը անկեղծ ըլլանք. — ՅՈՎՀ. Յ. ԱԶՆԱԻՌԵԱՆ : Բանագործութիւն մը. — ՍՏԵՓԱՆ ԵՐԿԱՆԵԱՆ : Իմ օրագիրս. — ՊԷԱԴՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ : Անցորդը. — ՍՈԿՐԱՏ ՍԱՐՐԱՖԵԱՆ : Թե ինչե՛ր կը խօսեցնեն 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12՝ գիւնի զաւարները. — ՍՄԲԱՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ : Զմեռ, կի՛ն, գլխարկ. — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Գեսարական հարսանիք. — ՀՐԱՆԴ ՍԷՎՏԱՆԵԱՆ : «Բիզանդիոն»-ի տասներորդ տարեմուտին տոբի. — ԽՄԲ. : Իրիկեամուտի զգայնութիւններ. — ԵՐ. Մ. ԶԻԻՀԷՐԵԱՆ : Ոտանաւոր երկի կնկան միջեւ. — Ե. ԿՈՒՅՈՒՄՅԱՆ : Շարքունի յուրեր :

ՔԻԶ ՄԸ ԱՆԿԵՂԾ ԸԼԼԱՆՔ

Ամէն անգամ որ անկեղծութեան վրայ խօսուի, իւրաքանչիւր մարդ մէկէ աւելի օրինակներով կը ջանայ համոզել զիմացիներ թէ՛ ինք կատարելապէս տէրն է անոր՝ հակառակ ուրիշներու գաղափար անգամ չունենալնուն իր այդ բարեմասնութեան մասին : Եւ սակայն իրական անկեղծութիւնը՝ որ անշուշտ խօսքով չէ, այլ գործքով միայն, կրնայ իր գոյութիւնը հաստատել, ճիշդի մը պէս կը հայի, կամ ոգիի մը պէս կ'անհետի՝ երբ կարգը կուգայ գործնական հաստատումին :

Ներկայ կատարելապէս նիւթապաշտ դարուն մէջ, երբ ամէն մարդ շահ մը, օգուտ մը կը փնտռէ իր ամէն մէկ շարժումին, գործառնութեան հընկերական յարաբերութիւններուն մէջ, բնականօրէն շատ քիչ կարեւորութիւն կուտայ այդ խիստ փնտռուած մարդավայել արարքին ու կը դիմէ նուազ անաչառութեան եւ չա՛տ անգամ կեղծիքին, նոյն բանը սպասելով իր զիմացիներէն ալ, հակառակ պարագային ցուցնելով անոր եթէ ոչ աչքառու ատելութիւն մը, գոնէ զգալի անտարբերութիւն մը, ցուրտ վերաբերում մը օրուն

առջի բերան չի կրնար մեկնութիւն մը տալ այդ գիմացիներ, մտքին մէջ չի կրնալով հաշտեցնել նոյն արարքը իր բռնած անկեղծութեան հետ :

Եւ սակայն Անկեղծութիւնը, որ անհրաժեշտ պէտք մըն է ընտանեկան, առեւտրական ու հանրային կեանքի ամէն պարագաներուն մէջ, ցաւալի է ըսել որ տեղի տալու վրայ է միշտ կեղծիքին ու Խաբէութեան, թէեւ բացառութիւնները յարգելով կրնանք ընդունիլ թէ՛ կան տակաւին ուղղամիտ մարդիկ, որոնք ամէն պատահականութեան մէջ կը յամառին պահել անոր մատնանշելի գոյութիւնը :

Իրաւ է թէ կեղծիքը, նոյն իսկ երգումով հաստատուած, ներքին նկատուած է շատ անգամ՝ իր, եթէ ոչ օգտակար, գէթ անփառ հետեւանքին մէջ, սակայն և այնպէս կեղծիքներ ալ կան՝ որոնք ներուելէ հեռու՝ կը մեղադրուին ալ շատ իրաւունքով՝ չունենալով իրենց մէջ բնաւ արդարացուցիչ նշկատում մը, ու մէջ բերուած ըլլալով միմիայն բարոյական կեղծ ու չինծու համբաւի մը շինութեան կամ թէ սնապարծ եմի մը գոհացումին համար :

Այսպէս, ընտանեկան կեանքի մէջ կեղծիքը կը ներուի ու է ամուսինի մը, երբ սա կստիպուի կեղծել՝ նկատի առնելով որ իր կէսին յատուկ զաղտնիքի մը անաչառօրէն ու մերկապարանոց պարզումը կրնայ շատ աւելի տխուր հետեւանք ունենալ քան իր արդի վիճակին մէջ, կեղծիքի մը քօղին տակ ծածկուած, առեւտրական կեանքի մէջ կը ներուի կեղծիքը, երբ ան չէ անցած տակաւին մարդկային ընկերութենէ ընդունուած և նոյն իսկ օրէնքներով նուիրագործուած սահմաններէն անդին, կը ներուի վերջապէս կեղծիքը՝ հանրային յարաբերական կեանքի մէջ, երբ ան չունի բնաւ ուրիշի մը փառ հասցընելու բնոյթը : Ու ասոնցմէ դուրս եղած միւս աննպատակ կեղծիքները որոնք իրենց ետեւէն կը քաշեն Անվատահութիւնը, կատարեալ միքրոպներն են մարդկային բարոյական կեանքին արմատական փտացումին :

Մասնաւորելով խօսքերնիս մեր ներքին կեանքի անհատական յարաբերութիւններուն վրայ, պէտք է խոստովանինք թէ՛ կեղծիքը ա՛յնչափ առաջ գացած է մեր մէջ որ է՛ն ուղղամիտ մարդն անգամ կը շուարի կը մնայ իր արդար գատողութեան գործադրումին մէջ՝ հարիւրին հարիւր գիտնալով որ չարաչար պիտի մեկնուի իր անկեղծութիւնը : Պզտիկ օրինակ մը այս առթիւ . գործատան մը հնամենի և կարեւոր մէկ պաշտօնեան երբ օր մը անկեղծութեան կը հրաւիրէր իր փաթօնը, որ դժբաղդաբար իր մէջը բնաւ չունէր այդ փնտռուած ապրանքին, սա պատասխանը առաւ անկէ . «ներեցէք պարօնը», չէի գիտեր որ ճգնաւորի մը քով կը գտնուիմ» :

Եւ որովհետեւ կեղծիքն է որ կը նշմարուի մեր բարեկամական, պաշտօնակցական շրջանակներուն մէջ, մի՛ կարծէք որ անաչառ ու անկեղծ մարդիկ տարբեր գնահատումներու արժանան, ամէն տեղ նոյն բանն է, մի՛շտ անարգանքը, մի՛շտ ծաղրանքը ցոյց տրուած ուղղամտութեան դէմ :

Ու այս պարագային մէջ, ամէն անգամ որ առիթը ներկայանայ ի գործ դնել անկեղծութիւնը՝ իր է՛ն անաչառ երանգներուն մէջ, կրնայ ըլլալ որ այդ միեւնոյն անկեղծ մարդիկը, հակառակ իրենց շերտ անաչառութեան,

չկրնալով անտեսել բարեկամական նկատումները սխալին ալ, վտանգելով այսպէս իրենց անկեղծութիւնը: Որովհետեւ ու է մէկը որչափ ալ սկզբունք ըրած ըլլայ իրեն՝ անկեղծութիւնը՝ զայն գործադրելու մէջ ալ պարտաւոր է մտիկ ընել մէկ կողմէ խղճի ձայնին, միւս կողմէ իր բարեկամութեան վտանգող ուրիշի մը ակնկալութեան, ու այս երկու պարագային մէջ, կամ այն է որ պիտի անսայ խղճի ձայնին և գործադրէ իր անաչառութիւնը, և կամ նախապատուութիւն տալով իր բարեկամին թախանձանքին՝ մէկդի վտարէ արդարութեան ձայնը, և, պէտք է ըսել որ մարդ իր սխալականութիւնով չառանգամ աւելի՝ կ'անսայ իր բարեկամին ակնկալութիւններուն, քան իր անաչառ դատողութեան:

Մենք, ու եւ միջոցով մը, բարեկամ կըլլանք մէկին, կը սիրենք կը յարգենք անոր անկեղծութիւնը՝ որչափ ատեն որ մեզի աննպաստ չէ անիկա, ու եթէ պատահի որ օր մըն ալ մեր շահուն չի կրնանք ծառայեցնել այդ անկեղծութիւնը, կը վշտանանք, բարեւը կը կտրենք ու կ'սկսինք բամբասել մեր երբեմնի անկեղծ բարեկամը, իբրև ամենէն թոյլ, ու ամենէն անսկզբունք մարդը: Աղէկ բան մը չէ սակայն ասիկա, մենք յարգանքի, բարեկամութեան մը փոխարէն իրաւունք չունինք մեզի գործիք ընելու ուրիշի մը սկզբունքն ու անկեղծութիւնը. մենք պէտք է ջանանք, մանաւանդ, սխալ պահանջումով մը նեղը՝ չի ձգելու մեր բարեկամը իր ուղղամիտ դատաստանին մէջ, աս է արդէն ճշմարիտ բարեկամութիւնն ալ և ասանկ կը պահանջէ ճշմարիտ անկեղծութիւնը:

ՅՈՎՀ. Մ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

ԲԱՆԱԳՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Յ. ԱԼՓԻԱՐԻՆ

«Ա. Մամոյ» վերջին թուոյն մէջ բաւական ապշութեամբ կարդացինք, մեր անգլագական (°) յորջորջուած, երգիծարանին ° ° ° Յ. Ալփիարի բանագողութեան մէկ գլուխ գործոցը, «Գրագէտի տուայտանք», որ պարզ թարգմանութիւնն էր «Մաթէն» ի օրդան զուարթ-քրօնկագրին Մ. Արտուէնի, (H Harduin) մէկ քրօնկին որ հրատարակուած էր հազիւ ասկէ երեք չորս շաբաթ առաջ:

Պահ մը չուզեցինք իր երգիծարանի եւ Պարոնեանի յաջորդի (°) կարողութիւնները կասկածի տակ դնել. ու փնտռելով այդ թիւը՝ երկու յօդուածներն ալ բաղդատութեան դրինք: Արդիւնքը ինչ կուզէ որ ըլլար, ճիշդ մեր վերի գրածը. աղուոր տեսակէն բանագողութիւն մը ու Մ. Արտու-

էնի քրօնկին քալի փուլի մէկ քօրիան...: Անիրաւութիւն գործած չըլլալու համար միայն ըսենք թէ՝ փոխանակ Մ. Արտուէնի պէս տանթելի միջնորդ ըլլալուն, Յ. Ալփիար դօրչոնի (Lorchon) ի միջնորդ եղած էր: Բառի պարզ փոփոխութիւն մը ...:

Ամէն պարագայի մէջ Յ. Ալփիար, այս անգամ անխոհեմութիւնը գործեց այսքան թարմ գրուած մը իւրացնելով. եթէ քիչ մը համբերութիւնը ունենար որ ժամանակ անցնի եւ հիննայ այդ գրուածը, թերեւս մասամբ մը յաջողէր իբրեւ իրենը կլեցնել հանրութեան, քանի որ, գրական զուարթ ճիւղին այսպիսի աճապարարութիւններ իւր արհեստն է ...:

ՍՏԵՓԱՆ ԵՐԿԱՆԵԱՆ

ԻՄ ՕՐԱԳԻՐՍ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Հպարտութիւնն ... և՛ կ'ըսէր անցեալ օր բարեկամահիներէս մին, կը սոսկամայդ մոլութենէն:

Սակայն չէ՞ք ընդունիր երբ ըսեմ թէ ի հարկին մարդ պէտք է որ ունենայ քիչ մը այդ մոլութենէն:

Այն կինը կամ օրիորդը որ հպարտութիւն չունի, սկզբունք չունի ըսել է պարզապէս, իր անձին, իր իսկութեան, իր արժանիքին գիտակցութիւնը չունի:

Երբ երիտասարդի մը դարպասին կ'ենթարկուի աղջիկ մը, եւ երբ հպարտ չերեւնալու համար թոյլ կը գտնուի անոր հանդէպ ...:

Երբ քիչ մը խօսուած մէկը ընտանեկան հաւաքոյթի մը հազար եւ մէկ թացիկութիւններով պարի կը հրաւիրէ օրիորդ մը, եւ եթէ այս վերջինը մերժէ՞ ...:

Երբ օրիորդ մը ճամբան, եկեղեցին եւ կամ ուրիշ տեղ ծանր եւ պատշաճ հովեր առնէ, առանց կարեւորութիւն տալու շուրջի բղղիւնին ...:

Երբ վերջապէս կին կամ աղջիկ ինքզինքը իրմէ զարգացումով, դիրքով եւ տարիքով վար անհատներու հետ խելք չի դնէ ու անոնց կարգը չի դասէ ինքզինքը՞ ...:

Կը հարցնեմ՝ հպարտութիւնն է ասիկայ, թէ ոչ անձն իւր գիտակցութիւնն:

Ըստ իս, աւելի լաւ է հպարտութեան մոլութիւնը տանիլ, քան թէ վրաձգողութեան շապիկը:

ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ուրախ եմ տեսնելով թէ վերջին մէկ երկու տարիներուն մէջ օրաթերթերու եւ պարբերականներու մէջ նորանոր գրողներ կ'երեւին: Այս պարագան ցոյց կուտայ թէ՛ գրականութիւնը տակաւ սիրելի կը դառնայ քիչ շատ զարգացած անհատներու մօտ, որոնք նոր փափաքով մը հրապարակ կ'ենեն, ամէն մէկը իր ընտրած նիւթը որոճալու օրագրութիւն ըսուած մարգագետին վրայ: Լաւ:

Բայց ի՞նչ պէտք է ըսել ամէն անոնց որոնք ընթերցող հասարակութեան ուսուցանելու, բացատրելու կ'եղան անանկ պարզ գիտելիքներ — իբր թէ կենցաղագիտան — որոնք բան մը սովորեցնելն աւելի իրենց սխալ բացատրութեան շնորհիւ գիտցուածներն ալ մոռցնել կուտան:

Օրինակ:

Ո՞վ չգիտեր թէ թատրոնի մը օթեակին մէջ կիները պատուակալ տեղը պէտք է զբաւեն:

Թէ՛ սալօն մը մտած ժամանակ հիւրը պէտք է նախ տանը grande dam Ե. բարեւէ:

Թէ՛ թատրոններու մէջ կիներ պէտք չէ օթեակէ օթեակ այցելութիւն տան (չեմ գիտեր թէ ո՞վ տեսած է կին մը որ անդաստան պտըտիլի թատրոնին մէջ):

Թէ՛ հազացուած ժամանակ ձեռքը բերնին տանելու է:

Թէ՛ սալօնէն դուրս նախ պէտք է հիւրերը ելլեն ապա տնեցիք:

Թէ՛ ընտանեկան շրջանակներու մէջ երբ կին մը խօսի, այրեր պէտք է լռեն:

Այս եւ ասոնց նման չպիտոյ նորոյթներ (.) երբ իբր յօդուած ժողովուրդին կը հրամցուին, պէտք է գիտնալ թէ ատկէ banal մտածում չի կրնար ըլլալ:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

Թէ եւ լուր Խոսիլային կուգայ, սակայն մեր կենցաղին պաշտօն հարց մը ըլլալուն համար նիւթ կառնենք ատկէ:

Թատրոններու մէջ կանանց զխտրակները վերցուած:

Եւ իրաւամբ:

Այս վճռական եւ անմիջական իրաւունքը տալը ամէն կնոջ գործը չէ, սակայն ձեր աղախինը — ես — որ այդչէն սկզբամբ հաւկառակ էի այդ ահագնածաւալ զխտրակներուն, առիթը կը գտնամ ըսելու թէ, շատ լաւ կարգադրութիւն մըն է եղածը: Երեւակայեցէք բնութիւն ծանրութիւնը, դրամիւն շատութիւնը, գէմքին տուած տգեղութիւնը, եւ par dessus le marché անոր ասոր դիտողութիւնը հանդիսավայրի մը մէջ:

Կնոջ ճաշակը որ արականէն տարբեր եւ անկէ շատ մեծ առաւելութիւն մը պէտք է:

ունենայ, իր նպատակին հասած չէ մինչեւ այսօր: Հաւատացէ՛ք, այրերը մենէ շատ աւելի կոկիկ են տարազի եւ թուսլէթի տեսակէտներով, քան մը որ կարծեմ ne nous apporte pas honneur !

Այս կերպով, երբ անգամ մը համոզուինք թէ՛ ճշմարիտ է եղած դիտողութիւնները, այն ատեն տարին երկու անգամ Բառէի կամ Շրիկըրի դրամարկդին մօտենալու, Պանգ Օթումանի եւ կամ Բոքսի Լիօնէի անհատական արկղիկներուն կը մօտենանք, մեր ըրած խնայողութեանց պտուղը պարփակելու:

Օրինակը նախ ես կուտամ, դիտեցէ՛ք զլսարկս, երբ փողոցին մէջ հանդիպիք կանգուն մը ժանեակ հազիւ կը գտնէք վերան, ան ալ double face գալ տարի միւս կողմը գործածելու համար:

ՀԻՆԳՇԱԲԹԻ

Օրուան կարեւոր նիւթերուն մէկն ալ պատիկներու նախնական կրթութիւնն է: Այս նիւթին վրայ եթէ չեմ սխալիր մեր յարգելի Տնօրէնը՝ Վահան էֆ. Փափազեան առաջնորդող յօդուած մը դրած էր ասկէ մէկ քանի թիւ առաջ, եւ իրաւամբ չեչտած էր, պատիկներու անկրթութեան պատճառը ծնողական անտարբերութեան վերագրելով:

Ջիղերուս կը դպի, երբ տեսնամ տղեկ մը որ գետինը պառկած անլուր ճիշերով կը տապալուր սենեկին մէջ, մինչ անդին մայրը իր կարը կը շարունակէ անտարբեր, եւ կամ կը խօսակցի իր մէկ բարեկամուհիին հետ:

Պզտիկ տղայ մը, ըստ կանոնի մեծցնելու համար զանկայ իրր մեծ, իրր ընկեր նկատելու է, եւ պէտք է անոր հետ վարուիլ այնպէս, ինչպէս կը վարուինք մեր տարեկիցներուն հետ: Այս պարագային տղան լրջութիւն կը սովորի, խօսք հասկնալու կը վարժուի եւ բոլորովին հեռու կըլլայ վայրենի դիմադարձութենէ: Իմ մասիս ամէնէն սիրած ժամանցս պատիկներու հետ խօսակցութիւնս է, որչա՛փ անուշ է անոնց միամիտ հարցումներուն ունկնդրել, պատասխանելը ...: Մինչդեռ շատեր ու շատեր կը նեղանան, կը բարկանան եւ չեն ուզեր կա-

րեւորութիւն տալ միմիկներու, եւ արդիւնքը սա կըլլայ որ խեղճ պզտիկները չի կրնալով զսպել իրենց մեծ ոգիութիւնը, բարկութիւններն լալով ու պոռչտալով կառնեն: Աւելի ազէկ է պզտիկ տղու մը հետ ժամանակ անցնել, քան թէ չափահասի մը հետ խօսուրդալով ... որովհետեւ առաջնոյն մէջ անմեղութիւն, իսկ երկրորդին մէջ թունաւորում կայ:

ՈՒՐԱԹ

Աւելի լաւ է մարդ չգիտցածը բնաւ չը խօսի՝ քան թէ սխալ:

Ահա խրատական մը, որ ոչ մէկերնիս կը գործադրենք սակայն: Շատ անգամ հանդիպած եմ ինքեղիքէն օրիորդներու, որոնք իբր թէ օտար լեզու խօսելու մարմնջէն մղուած, այնպէս մը կը խօսուրդալին՝ որ յետին տգէտը անգամ հասկնալով թէ սխալ է ըսածնին, խնդուք չի կրնար զսպել:

Այս պարագան քիչ մը քիչ ծաղրելի չէ պէտք է ըսել:

Մայրենի լեզուն ճգել — որուն մէջ արդէն շատ բան չեն խոստանար — ու ելլալ օտար լեզու մը քաջքուտել, եւ ան ալ մեռեալ վիճակի մէջ, ահա ինչ որ ներքի չէ իբր կրթութեան հակառակ:

Շատ անգամ կը պատահիմ այդ կարգի օրիորդներու, մանաւանդ եկեղեցւոյ մէջ, ուր իբր թէ ուրիշներու կուհել չտալու համար իրենց խօսակցութիւնը, կսկսին գաղիւրէն մթմթալով, խօսակցութիւն մը որ անշուշտ Աւետարանէն չէ, այլ օրուան երիտասարդներու վրայ եւ կամ նշանտուքի հարսնիքի առթիւ:

Իրր սեռակից, ես կը խպնիմ այդ կարգի օրիորդները տեսնելով, եւ կը փափաքիմ որ անոնք իրենց պարագոյ ժամերուն մէջ պարզ եւ մաքուր հայերէնը սովորին, փոխանակ ժամուն դասը խաղը ըլլալու անճոռնի գաղիւրէնով մը:

ՇԱՐԱԹ

Ամէն բան կիներուն կը վայլէ, բայց խաղամոլութիւնը ... doulou, կանայք ամէն յատկութիւն ունին պէտք է ըսել, կերածնին կը ցուցնեն, հագածնին կը վայլեցունեն,

մտքերնին գեղեցիկ կերպով կրնան բացատրել, բայց երբ կանանչ սեղանին գլուխը անցնին ... կ'իյնան:

Չեմ գիտեր թէ ո՞ր թուականէն սեռակիցներս սկսան օրիային ասօն եւ կամ քաւսր թռեփը ճանչնալ, սակայն ճշմարտութիւնը սա է որ, այսօր էրիկմարդէ մը աւելի լաւ գիտեն պլրժ քաշել իրենց հակառակորդներուն:

Փէմինիզմը կ'ընդունիմ սկզբամբ, սակայն ինչպէս ամէն բանի մէջ չափազանցութիւնը չեմ սիրեր, նայնպէս կնոջ չեմ ներեր թղթախաղը:

Դիտեցէք հայ-լայֆ սալօնի մը մէջ բոֆեռի ֆառէի մը շուրջ, մետաքս պլուզով տիկինը որ վօրոյր ռեսք կը քաշէ դէմինին...

Օ զա!

ԿԻՐԱԿԻ


— Վարդը իր փուշը ունի, կինը իր լեզուն: Երկուքն ալ ինքզինքնին կը պաշտպանեն: Վարդը տեղի կուտայ մարդուն, ու մարդը՝ իր կարգին կնկան:

— Գիտութեան մէջ չիկայ գործիք մը այնչափ ազդու եւ հատու՝ որչափ կնոջ լեզուն:

— Կիները փայփայողը իր բարոյականէն բան մը կաւելցնէ, իսկ հակառակողը՝ իր կեանքէն:

— Կուզէ՞ք կիները ձեզի անձնատուր ընել՝ անոնց ջուրին գացէք ժամանակ մը, շատ գիւրին կըլլայ զանոնք սանձելը վերջէն:

ՊԵՍԵՐԻՍ ԾԱՀԻՆԵԱՆ



ԿՈՒԶԷՔ

Այո, կ'ուզէ՞ք ձեր հոգեհատարներուն առողջութիւնը, կ'ուզէ՞ք որ ձեր զաւակները խնձոր այտեր ունենան, կ'ուզէ՞ք ...:

Կ'ուզէ՞ք որ բժիշկը երբէք ձեր զաւակներուն բազկերակը ձեռք չառնէ... կ'ուզէ՞ք... Կարդացէք միմիայն մեր կողքին վրայ

ՁՈՒԿԸ ԾՈՎԷՆ ԴՈՒՐՍ

Ա Ն Յ Ո Ր Պ Ը

Միևսկութեան պահն է հիմա ... շուկայն Տարուքիւն մը, փղծիւմ մը կայ հոգոյս մեջ, Ծառ դժուար է մեր բաժանումն՝ ուր անձայն Հոգիս կուշայ, աչքես ալ բաց եմ անկերջ:

Հաճոյքն անդարձ, անհուն սերը կ'երագեմ, Ձոր ունեցանք պահ մը՝ երբ որ իրարու թոյլ խօսքով մը կապուած էինք. ի՞նչ վրսեմ Վայրկեաններ կան, որք կը թռչին մերք հեռու:

Այլ Աստուած իմ, ի՞նչ վառ աչքեր, ի՞նչ յօններ, Եւ, ո՞հ, արդեօք կը մոռնուի՞ն անոնք շուրս, Գոզգես յոյս մը, կայծ մը հաւակ բորբոսեր՝ Ձոյգ մը քաւիշ յօններուն քաւ սեւ ու մութ:

Անոյշ նայուածք ու ակնարկ մը մոգական, Բայց ի՞նչ մագեր, քեհեզ, կայծա՛կ ու աշիֆ, Ուր մութին մեջ ծովու մը պէս մոռնեալն՝ Կը գրգռուէր, կ'ըլլար ձեռքիս խաղաղիֆ:

Ձի՛ւն, կաթնաքոյր այտերուն պէս՝ շղարշով թեքեօրեմ կը ծածկեր մերք իր քեւեր, Ի՞նչ հաճոյք էր եւ ի՞նչ վայելք հոգեթով, Ի՞նչ բոյր ու բոյր, աշխարհիւմ, ի՞նչ քեւեռ:

Միքե կրնա՞մ մոռնալ ֆէզի, ո՞վ աղջիկ, Բեզ չերագե՛լ... ու խաբկանքներ չունենա՛լ: Բայց արդ սուգ մը ունիմ բռնած զերդ ջղջիկ, Երբեքեդ գո՛ւրկ, վարդայեքեդ գո՛ւրկ եմ ալ:

Գիտեմ սակայն, դուն կը մոռնաս ինձի շուրս, Ո՛հ, կը մոռնա՛ս, որովհետեւ աղոյճ՝ ես, Կը նախանձի՛մ... ճըսած՝ աչքս արցունքոս, Վայելողի պարծանքն ունիմ սակայն ֆեզ...:

ՍՈՎՐԱՏ ՍԱՐԲԱՏԵԱՆ



ԹԷ ԻՆՉԵՐ ԿԸ ԽՕՍԵՑՆԵՆ

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12,

ԳԻՆԻԻ ԳԱԽԱԹՆԵՐԸ

Չեմ գիտեր ի՞նչ է պատճառը, երբ ուրախ եմ՝ կը խմեմ, քանի խմեմ ա՛յնքան աւելի ուրախ կ'ըլլամ՝ որով ա՛լ աւելի կը խմեմ մինչեւ որ ... չեմ գիտեր թէ եթէ չատ խմեմ ի՞նչ կ'ըլլամ:

Չը կարծէք թէ չեմ խմեր երբ տխուր ըլլամ. ընդհակառակը, դարձեալ կը խմեմ, ու որքան որ խմեմ ա՛յնքան կը տխրիմ, ու պէտք է որ աւելի խմեմ՝ աւելի չատ տըխրելու եւ որով աւելի չատ ... խմելու համար: Գինեմոլ չեմ, սակայն եւ այնպէս պէտք է որ խմեմ ... խմած ըլլալու համար: Եղան մարդիկներ որոնք Թուչանձեանի մրցանակաւոր յօդուածներէն առնուեցան ու գինեմոլ չը կոչուելու համար մէկ երկու օր չը խմեցին, եւ սակայն ես չառնուեցայ որովհետեւ գինեմոլ չէի եւ ... խմեցի: Հակադրական յօդուածները կարդացի ... գինետունին մէջ, ու քանի կարդացի՝ ա՛յնքան աւելի խմեցի: Ամէն զգացում անհրաժեշտ կը դարձնէ ինծի խմելը:

Այսօր՝ եղբորս Թէոփիլոսին մահուանը երրորդ տարեդարձն է, ուստի պէտք է որ խմեմ, ինչպէս նաեւ իմ ծնած օրս, չէ՛, հօրս ծնած օրը, ե՛ս կամ հայրս, ի՞նչ կարեւորութիւն ունի:

— Փեփրոնս, աղջիկս, մառանէն երեք շիշ գինի բեր, ինչպէս նաեւ երեք գաւաթ:

— Երեք գաւաթ, մէկո՛ւ մը կ'սպասես:

— Չէ՛, այսօր առանձին մնալ կ'ուզեմ, չա՛տ տխուր եմ, որովհետեւ հօրեղբորդ Թէոփիլոսին մեռած օրն է. այո՛, մինակ մնամ պիտի, չատ ուրախ եմ քանի որ մեծ հօրդ ծննդեանը տարեդարձն է այսօր:

— Բայց երեք գաւաթը ...:

— Իւրաքանչիւր շիշին համար մէկ գաւաթ: Գնա՛, աղուորս, այսօր օղը պայծառ է, մօրաբրոջդ գնա որ քեզի Հասարակաց Պարտէզը տանի:

Փեփրոն երեք շիշով երեք գաւաթները կը բերէ ու զիս համբուրելէ յետոյ մօրա-

բրոջը՝ Վառվառին կ'երթայ: Առանձին կը մնամ:

— Կենա՛ցդ, Թէոփիլո՛ս եղբայր, կ'ըսեմ ու կը խմեմ: Այսօր քու մահուանդ տարեդարձն է՝ եկո՛ւր որ միասին խմենք, ես չատ տխուր եմ: Ու կը խմեմ: Հայրի՛կ, անուշի՛կ հայրիկս, այսօր քու ծննդեանդ տարեդարձն է, չատ ուրախ եմ: Ու կը խմեմ: Եկէ՛ք, եկէ՛ք, եթէ չը գտք՝ ձեր գաւաթովը ձեր գինիէն ալ ես կը խմեմ:

Ու կը կոնծեմ:

Կ'սպասեմ որ եղբայրս եւ հայրս գան. բայց անոնք զիս չատ կ'սպասեն: Երրորդ, չորրորդ գաւաթը կը պարպեմ, հետզհետէ աւելի կը տխրիմ ու կը զուարթանամ. քանի կը տխրիմ՝ կը խմեմ, քանի՛ կը զուարթանամ՝ հատ մըն ալ կը նետեմ, ու տակաւ անցեալս աչքիս առջեւ կը պատկերանայ: Կը տեսնեմ թէ ինչպէս քսան տարի տուալ շունի մը պոչը կտրեցի ... եւ թէ գինետունին մէջ ի՛նչպէս շիշ մը գինին մէկ ումպով խմեցի՝ երբ իմացուցին ինծի թէ՛ կինս աղջիկ զաւակ մը պարգեւած էր ... անոր ապագայ նշանածուին: Ու կը խնդամ ու կը խմեմ, եւ կուլամ ու կը խմեմ:

Շիշին երկրորդը խմելէ յետոյ երբ երրորդին կը պատրաստուիմ՝ եւ ահա՛ կնկանըս ուրուականը դէմս կը կանգնի:

— Վա՛յ, Յուդիտա՛յ, դո՛ւն ես, կ'ըսեմ:

— Ե՛ս, հապա ո՛վ պիտի ըլլար, կը պօռայ ան ձեռքերը մէջքին դնելով, որ կենդանութեանը սովորութիւնն էր:

— Ա՛խ, Յուդիտա՛ս, կը թոթովեմ, վախնալով եւ ութերորդ գաւաթն ալ կոնծելով, մեռած ատե՞նդ ալ հանգստութիւն չունիս:

— Ի՞նչ կարծեցիր, կը ճչէ ան, քեզի ո՞վ ուղղութեան պիտի բերէ:

— Յուդիտա՛յ, Երկինքին մէջ ալ ...

— Լռէ՛, ապիկա՛ր, կը պօռայ, դուն հոս նստէ խմէ ու մեր աղջիկը ձգէ որ դաշտե-

րը մինակը պտտի: Ուայտառակութիւն է աս:

— Հոգի՛ս, կը սխալիս, Փեփրոն մօրաքըրոջը գնաց:

— Ես քենէ լաւ գիտեմ:

— Այո՛, ողջ ատենդ ալ ամէն բան ինձմէ լաւ գիտէիր՝ բայց մեռար: Իսկ մեր աղջիկը մօրաքըրոջը հետ Հասարակաց Պարտէզը գնաց:

— Հասարակաց Պարտէ՞զը գնաց, սակայն որո՞ւ հետ, երիտասարդ Տրիփոնին հետ:

— Աղջկանը մեղքը կ'առնես կոր, անկա Տրիփոն մրիփոն չունի:

— Անամօթ գինեմուղ, դուն ասանկ անխոհեմ մնացիր մինչեւ որ պզտիկ Տրիփոն մըն ալ աշխարհ գայ եւ քու պէսերդ քաշէ, ու մինչեւ որ դժբաղդութիւնը դարմանել անկարելի ըլլայ. թո՛ւ երեսիդ, թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ:

Եւ այս փառաւոր ու հանդիսաւոր անարգանքն յետոյ կնոջս ուրուականը աներեւոյթ եղաւ:

Ու ես չարունակեցի խմել իններորդ գաւաթ մըն ալ, եւ սկսայ մտածել Փեփրոնին վրայ թէ՛ իրօք ան Տրիփոն, Կրիփոն, Զրիփոն ունի՞:

Տակաւ առ տակաւ մութը կը կոխէ, ու ես չեմ մերժեր խմել տառներորդ, տասն եւ մէկերորդ գաւաթներն ալ՝ զորս կը հրամայեն ինծի ... ձեռքերս:

Մտածութեանս մէջ թէոփիլոս եղբորս մահուանը անկողինը կը պատկերանայ, ուր վիրաւորուած եւ մեռած՝ երկինք կը փոխադրուիմ: Քովս ծունքի եկած է աղջիկս, Փեփրոնը՝ որ պաղ ջուրով դաստակներս եւ քունքերս կը չփէ:

— Փեփրոն, կ'ըսեմ աղջկանս, շատ ուրախ եմ որ ինծի հետ երկինք եկար, չնորհակալ եմ որ զիս մինակ չը ձգեցիր ...:

— Հայրի՛կ, ինքզինքիդ եկո՛ւր:

— Աղջիկս, մի՛ խօսիր, որովհետեւ մեռածէս ի վեր շատ տկար կ'զգամ ինքզինքս: Հիմա դուն ալ երկինքին մէջն ես, անմեղ ես ու վստահ եմ թէ դուն Հասարակաց Պարտէզը չը գացիր քու Տրիփոնիդ հետ:

— Ինչե՞ր կ'ըսես, հայրի՛կ:

— Մի՛ խօսիր, կը տեսնես որ խիստ տրկար եմ տակաւին: Մահուանս առաջին իրիկունը ինչո՞ւ տուն չեկար, մոռաւանջ էի վիճակիդ մասին, որովհետեւ մայրիկդ ըսաւ թէ՛ Տրիփոնիդ հետ ես:

— Բայց, հայրի՛կ, ես երէկ իրիկուն ժամը մէկին եկայ, ու կարծելով թէ քնացած ես՝ առանց ձայն հանելու սենեակս գացի:

— Փեփրոն, նայէ՛ կարմրեցար, ինչ եւ է ... հիմա դուն ալ ինծի հետ երկինքին մէջն ես:

— Արթնցի՛ր հայրիկ, արթնցի՛ր, ժամը ահա՛ առտուան տասն է, կէս ժամէ ի վեր քեզ կը ցնցեմ ու չես արթնար:

— Իրաւունք չունի՛ս աղջի՛կս, մեռնողները հանգիստ կը ձգեն, որովհետեւ անոնք յետոյ կը վերադառնան, օրինակի համար, ինչպէս մայրդ Յուդիտան:

— Բայց վերջապէս արթնցի՛ր, միշտ կը զառանցես, կ'ըսես թէ թէոփիլոս եղբայրն եմ, թէ մեռած եմ, երկինքին մէջն եմ:

— Միթէ սո՛ւտ կ'ըսեմ: Անգամ մը գըլխուս վէրքը նայէ՛:

— Ասանկ ըլլալիքը գիտէի արդէն երբ երեք շիշ գինին բերի: Հիմա կը հասկնամ թէ մինակդ խմեր ես, ու գլուխդ սեղանին զարնելով վիրաւորուեր ես:

Այսպէս զղայապիլի երկար ատեն մնալէ յետոյ երբ կ'սթափիմ՝ կը տեսնեմ որ ո՛չ թէ երկինք գացեր՝ այլ սեղանին տակ պառկեր եմ:

— Փեփրոն, կ'ըսեմ աղջկանս, ասոնք մօրաքըրոջ Վառվառին մի՛ ըսեր ... հօրեղբորդ թէոփիլոսին եւ մեծ հօրդ համար եղաւ, բայց ... գաւաթ մը գինի տո՛ւր ...:

ՍՄԱՐՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ



Խմբագրական թուրքերանուօթին

ՅԱԶՈՐԻ ԹԻՒՈՎ

ՏԻԿ. ԲԵՐՈՒԶ ԶԱՏԻԿԵԱՆ

ԹԷՈՂԻԿ

Ե. ԹՕԼԱՅԵԱՆ

Ե Լ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻԻՆԸ

ՁՄԵՌ. ԿԻՆ. ԳԼԽԱՐԿ

Ամէն անգամ որ Կնուների մը ներկայ գտնուինք, ի մէջ այլոց սա հարցումը կը լսենք. «Երախայս ի՞նչ խնդրէ. — Հաւատք, Յոյս, Սէր եւ Մկրտութիւն»: Այնպէս չէ: Սակայն երբեք չենք խորհիր թէ մանուկը մեծնուլէն վերջ ալ տարին երկու անգամ կը կրկնուի նոյն հարցումը. «Տիկինն գի՞նչ խնդրէ. Գլխա՛րկ, մանթօ՛, եւ . . .»:

Հիմա որ ձմրան սեմին վրայ, մէկ ոտքերնիս ներս, մէկը դուրս կեցած՝ պատ-րաստութիւններ կը տեսնանք, կուրծք տա-լու համար վաղուան պո՛ւ, . . . ին, որ քի-թերնիս մօս մօտ պիտի ընէ ու մորթերնուս վրայ բուսած մազերը պիտի ցցէ. գործի մարդիկ, աւելի ընտանիքի տէրերուն հա-մար խօսելով, բոլորն ալ ինկած են փայտ, ածուխ եւ պարէն շտկելու, սպառնացող ե-րեք-չորս ամիսներուն դէմ՝ տալու համար: Մինչ կիներ՝ ոչ նուազ իրարանցում մը ու-նին, այն է եղանակին յատուկ գլխարկ, կրկնոց եւ կամ նմանօրինակ ֆանթէզիները շտկել շտկուելու համար:

Խեղճ ամուսիններ, դուք որ ամբողջ տուն մը տաքցնելու համար երկու ոսկի վառելափայտի կը յատկացնէք, անդին ձեր չըթ-զըռըլում արկիները կռնակին միայն տաքցնելու համար ատկէ ալ աւելի ծախքի կը խօթեն զձեզ, եւ դուք առանց դիտո-ղութիւն մը ընելու՝ գառնուկի պէս գլխիկոր կը համակերպիք եւ կը համրէք պիպիշները ամէն տարի, ամէն եղանակին:

Չեմ գիտեր թէ կինը ստեղծուած ատեն ուզել բայը գոյութիւն ունէ՞ր. . . . Ճշմարի-տը ըսելով՝ ըստ իս՝ կինը այսօրուան վիճա-կէն, արժէքէն եւ դիրքէն ալ աւելի բարձր մակարդակ մը պիտի ունենար եթէ բերնին մէջ ուզել բայը իբր ձութ չի ծամծմէր: Եւ արդէն չէ՞ մի որ աղջիկ մը երբ ամուսնա-նալ ուզէ՝ ափերով ոսկիներ կը խոստանայ երիտասարդին, որպէսզի կարող ըլլայ ուզել բայը խոնարհել, որով նեղը մնալուն, «իմ փարայովս է, ի՞նչ կրնաս ըսել. . . »ը փակ-ցունէ ամուսնոյն ճակատին:

Արդ, որովհետեւ մեր նպատակը կնոջ հոգեբանութիւնը ընել չէ հոս, այսքան մը բացատրել վերջ անոր ներքին ֆառաֆրեղը, անցնինք բուն մեր ըսելիքին՝ որ պիտի ըլ-լայ՝ Բերայի խանութներուն մէջ այս օրե-րուն անցած խօսակցութիւնները եւ գնում-ները:

Ծառկութիւն մը ունիմ որով կրնամ պար-ծիլ, այն է՝ ճանչնալ եւ զանազանել բոլոր արուարձաններու բնակիչները:

Անցեալ օր՝ Բերայի շիտակը՝ հանդիպե-ցայ մօր մը իր երկու աղջիկներով, որոնց գնացքէն, խօսելակերպէն դատելով՝ կռա-հեցի ի՛նչ մարառ ըլլալին, եւ որպէս զի հստիկ ժամանց մը պատճառեմ թերթիս ընթերցողներուն՝ հոս պիտի պատմեմ իրենց երեք չորս ժամուան կեանքը խանութներու քեզկեանին առջեւ:

— Էյ սօլուխ առէք. . . մեղա՛յ. . . թը-ռանվայի պէկիրի պէս օտքերս ձուր ինջաւ:

— Էյ տուտուս, առնելիքնիս եուն իրէի չէ քի տուռնէն առնենք, հէլպէթ պիտի պտըտի՞նք քի ուղղունը, կուստուրն ըռասթ գանք տէյի. . . :

— Քա իշտէ ճամէքեանին ետին քօքօք քօքօք շտկուտեր են, մէյ մը ներս մտնանք տէ սօռուճի ըլլանք. . . :

— Կեցի՛ր, տուն մէջ մի՛ մտնար, ան-ցած տարուան շարխանիս կիտե՞ս եա. . . կէնէ վրանիս խնտացնել չի տանք, տիոր քի Հոռօփիկին պէս չի գտնամ նէ կլոխա կազ պոյամասի մը պիլէ չի պիտի առնեմ. . . :

— Չայլախի պէս վերերէն մի՛ թռիք կէ-նէ, կիտէ՞ք ա՛հ հարերնիդ ի՛նչ տուաւ նէ, եանի անկէ մըսխալ մը էվէլ տալու կարո-ղութիւն չունիմ. . . :

— Չաթը անանկ է, հարս է ամա կէնէ կ'ըսեմ կէնէ կ'ըսեմ, քեզի ըլլայ նէ քէսէին պերանը կը պանայ կոր, մէզի սըրա կուգայ կոր նէ խըռխ այախ կը մտնայ կոր մէջը կիտես քի. . . :

— Տէ՛. . . հօրերնուդ միսը մ'ուտէ՛ք,

հէրի՜Քը երկուք կը վաստկի կոր՝ ձեզի երեք կը կերցունէ կոր....:

— Հայտէ լեզուդ քաշէ տէ սա խանութէն ներս մտնանք, ինծի կուգայ քի Պիստոսենց թարի՜Քը բաժ մաղազան աս է, նայէ՛, տաւանը առջին քէստանէ՛ճի մը կեցեր էր ըսաւ....:

— Քա աղէ՛կ եա, մէյ մը քէստանէ՛ճիին հարցունենք քի Պիստոսենք հո՞ս մտան տէյի....:

— Քա ի՞նչ կ'ըսես, տուտո՛ւ, խելքի՞դ եկաւ, ներս մտի՛, պօշ լախըսը չուզեր, ըսելով երեքը մէկ ներս կը մտնան վաճառատունէն, ուր իրենց պէս մէկ քանի ընտանիքներ զլսարկին կը փորձէին:

— Էյ վայ մեղքիս, աս ամէնքն ալ մեր եկած օրի՞ն նայեցան... հիմա նա՞սըլ ախսուած ախտի ընենք, մեզի ո՞վ պիտի նայի....:

— Սուս ճանըմ, չամաչըրըլը չենք տուտո՛ւ, հոստեղը Պէյօղլու է, մարդը տինկեանին թէփէն կը հանեն, խապա՞ր ես....:

— Ինծի նայէ՛, փսխեր եմ շարխաներնու թէփէն, պերնիս չէքմէ պիւզմէ տնէլու չէ՞ք եա... չօգ չէյ, բարա պիտի տամ, մալ պիտի առնեմ....:

Խանութին սպասուհիներէն մին իրենց մօտենալով,

— Թի աղարաթէ մատմազէլ...

— Աղապա չունին, եա՛վրում, իշտէ առի եկայ քի թէփէն իպիկի սոյէն մէյմէկ հատ շարխա առնենք տէյի....:

— Ա՛... սարքա իցուն, վառ վառ, էսանթիյօն սարքալառ վէրէժէյիմ մատամ, ցօգ մէմնուն զալածագսինիզ....:

— Վախ վախ վախ, կիտնայինք նէ թօռոտիային աղջիկը հետ կ'առնէինք, ան աս ծուռ լեզուէն կը հասկնար: Քա նէփրի՞կ... չելլան մեզ կոտտեն, հասկցա՞ր ինչ կ'ըսէ կոր նէ....:

— Սուս ճանըմ, ձգէ քի ես խօրաթեմ աղջկանը հետ, պանա՛ պագ, մատմազէլ, չու սօն մօտալարտան, (ետին ցուցնելով) չուրասը վար տարձած տէ ճակատը պարսը:

— Քա աղջի՛կ, ատ կուստօն քեզի չերթար....:

— Ծանըմ, սուս եղիւր բիւթիւն մեզի կը նային կոր....:

— Էյ կը նային եա... աճապ մեզի պէս տիւզկիւն Փամիլեա մը աս խանութէն ներս ոտք դրած ունէ՞ր....:

Նոյն ատեն օրիսրդը երկու երեք ձեւ զլսարկներ կը բերէ, որոնք քուքլայի պէս ձեռքին վրայ դարձնելով կ'սկսի սովորած փորիկ յանկերգը կրկնել....:

— Սօն մօտա, էսանթիյոն...

— Քա նէմզուր, երկու հեղ է լախըսը մը կուվառլաթմիշ կ'ընէ կոր բօստալը, աչքերնիդ պացէ՛ք, ասոր ասանդը Պէյօղլու է....:

— Օտտա է կ'ըսէ կոր, իշտէ թըպիսը Հոռոփիկենց առածին մէկ թարգն է աս սլ, ույմիշ ըլլայ նէ առնենք....:

— Մէյ մը կըլիզ անցուր նայինք....:

Ու օրիսրդը իր կարգին զլսարկը զուլսը դնելով հայելին կը նայի:

— Սանկ նայէ նայիմ... ը՛նհ... հէլէ կէօթէրիւլի չըլլայի տէ վալէր նայիմ... պէրէթի թի... ըսել չըլլայ՝ քիթէս էք ինկեր եօխսա....:

— Տուտու, սօլ թառափէս նայէ նայինք աղուոր կնա՞ց հրեսիս....:

— Տուտո՛ւ, սաղէս նայէ նայինք սուռաթս կլիւր կը ցուցնէ կոր....:

— Քա ատ ի՞նչ կէօշ արապատի պաներ են, վայ մեղքիս, մարդու վրայ խնտացի զահէր բարայովս կըլսա պիտի հանեմ....:

— Մ'ըսե՛ր տուտու, ույտուրմիշ ընենք տէ առնենք, նայէ՛ ձօրիւնէկ է կ'ըսէ կոր, աս կուստօն մինակ մեր կըլիսը պիտի կըտնուի....:

Էյ տնանկ է նէ եա՛վրում պէքէյէնք տէ ասը կայ նէ ան վախտը առնենք, էօրիւնէկը ի՞նչ տէյի առնենք....:

— Ո՛ւՓ... մտիկ կ'ընեն կոր տուտու, վրաս կէչուլթին կուգայ կոր....:

— Որի՞ հոգ... մտիկ ընեն նէ ընեն, եալապուր Սուրբիկին աղջիկը Փասլը չեմ ըներ կոր եա՛... չօգ չէյ....:

Հեռուէն տիկին մը խնդում երես իրենց մօտենալով,

— Որ սահաթ է կը նայինք կը նայինք պիւր միւնքիւն ույաուրմիշ չենք կրնար կոր ըներ, աղջկանը ծառքին վրայ աղուոր կ'երեւան կոր, կըլսա անցունելուս պէս ցուցանք կը տառնամ կոր....:

— Էյ քուրուկ, քիչ մըն ալ վայլումը նայէ քի առնես, ինծի կուգայ քի ատ տըրածդ կտորճիկ մը ճահիլի պան է . . .

— Ը՛նչ . . . ես իսէ տարօքի շարխայ է կ'ըսեմ կոր . . . , կլխաւորս ասանկ կ'ուզէ, եանի ճափճափի պան մը չառնեմ, կլխս չանցունեմ նէ խանթար խանթար սուռաթները կը կախէ, կ'ուզէ քի կէօստէրիչի երեւում . . . :

— Վո՛ւյ, վոյ մեղքիս, կըլխաւորդ ո՞վ կ'ըսուի . . .

— Գոգուճի Բուզանդ, չարչին պոյճա խանութ ունի, մեղայ ճաշալու էք . . . :

— Էյ քուրուկ չիյտեմ ամա մեր տարիքը ըլլողները բէք ատանկ ըրէնկեամուզ պաներ չեն կրնար տներ ամա՛ . . . ան է քի կլխաւորդ կ'ուզէ կոր նէ . . .

— Հապա, ան բիւթիւն կ'ուզէ քի ըռէնկ ըռէնկ քօտտէլաները անեմ տէմը ելլամ, քիչ մը թապլիյէթը ճահիլճէ է . . . :

— Էյ աս քովի աղջկիւր քո՛ւկդ է

— Աստուած պահէ նէ թոռս է . . . :

— Էյ անանկ է նէ ք'ա աս չարխան, թամ տարիքիդ կէօրէ է քուրուկ :

— Ի՞նչ ընեմ, էրիկս կ'ուզէ քի տայիմա բառլախ՝ երեւում . . . չէնէ սի՛րտ ունիմ ասանկ ըռէնկները կըլխս անցունելու . . .

— Իչտէ մենք ալ եկանք քի աղջիկներուն մէյմէկ հատ առնենք տէյի, պիրմիւնքիւն սուռաթններուն ույմիչ չըլար կոր . . . ան ուր է վախթ մը թիւրիւ մը շարխաներ կար քի չառխի պէս սուռաթիւ տուրս ֆըռլաթմիչ կ'ընէր . . . :

— Ի՛խ . . . նոր կարգուած տարիս շարխա մը ունէի քի, տնէի տէ սանկ տուրս մը ելլայի նէ էքմէքճիին պէկիրը պիլէ անկաճնները կը տնկեր կը նայէր, հիմա ո՛ւր է ան կուստօները . . .

— Էյ Ֆարազա կէ՛նէ կայ, կէ՛նէ կա՛յ ամա՛ մեր սուռաթնները արթըխ մուշմուլա է տարճեր տէ, էլմասէ շուպառա դնենք նէ աչքի չերեւար կոր . . .

— Էյ չէ մըսեր . . . քիչ մըն ալ քիսվէթը տեղը ըլլալու է քուրուկ, ըսել չըլլայ ամա պազի կլխաւորս կըսէ քի, հէլվաճի փապախին ալ կըլիդ անցունելու ըլլաս նէ թիւյերս բիւթին ոտքը կեւայ տէյի . . .

— Քա աֆ կընես ամա, կիտնալըս մարդըս վախնա նէ թիւյերը ոտքը կեւայ, ըսել է քի զավալը մարդը կը սոսկայ կոր քենէ . . .

— Ինչո՞ւ . . . վրաս բարի . . . մահալ լէիդ մէջը կայ ինծի պէս սոսկում մը . . . չէ՛ . . . ինծի նայէ ատ լախըտըդ չեմ ուտեր . . . հա՛, քեզի ըսեմ . . .

— Հայտէ աղջիկներ, հոտը ելաւ, սա բազարլըխն ալ ընենք տէ օսկուռիս տեղը տուն իյնանք, չէնէ սօլ աչկս կը խաղայ կոր, ըսելով, գլխարկներուն սակարկութիւնը կըլլայ եւ ըստ սովորականին — բան մը որ ջիղերուս կը դաչի — նոր գնածնին թազէ թազէ գլուխին կ'անցունեն, հիներն ալ բաքէթ ընելով ձեռքերին բռնած դուռնեն դուրս կեւան, մինչ իրենց ետին Գոգուճի Բուզանդ աղային տիկինը զունաւոր ժապաւն մըն ալ աւելցնել կուտայ գլխարկին վրայ, ամուսնոյն շիրին երեւնալու համար :

×

— Քա աղջիկներ, պարէ բալթօնիդ ալ առնենք տէ անանկ վար իջնանք . . .

— Բալթոններնիս վարէն պիտի առնենք տուտու, Քառլմասէն . . .

— Սնըմա՞նը ուր է . . . կէնէ ինծի պօստան տօլապիի պէկիր մի շինէք . . . վաթը վրաս կէշութին կուգայ կոր . . .

— Քա տուտու, դուն մինակ հետերնիս եկուր, ձգէ քի կուստօլու բան մը առնենք տէ կոնակինս անցունենք . . .

— Հայտէ նայինք, իչտէ երկու ոսկի ու կէս բարաս մնաց ճէպս, անոր կէօրէ եալըմիչ եղէք . . .

Տեսարանը կանցնի Ղալաթիա Գառլըմանի վաճառատունը :

— Նասըլ բալթօ իսթէօրսունըզ, սա՞ք, մաք ֆէռլա՞ն . . .

— Ինծի նայեցէք աղջիկներ, բէք ճիճիլի պիճիլի պաներ մի նայիք . . .

Ձէ տուտու, Նէվրիկին առածին պէս պիտի նայինք, մէջը ներս տէ վարթիւն դուրս . . .

— Ձիյտեմ, ալթըխ քալիքաթուռ պան մը չըլլա՞յ տէ . . .

Սպասաւորները մէկիկ մէկիկ կը հագցունեն օրիորդներուն, որոնք հայելիներու

դէմն անցած աջ ձախ կը դառնան ու կը դառնան:

— Նայի՛մ աղջիկ, վո՛ւյ ... բաշա գեղ-
ցիները դառցաք ... չէ՛ ... չեղաւ ... ծո՛
բալթօճի, նէ՞ պիչի՛մ տիր պու ...

— Մատամ էն սօն մօտա ...

— Կըսէ կոր ամա սուտ է, անցած օր
ժամը տեսայ հիշ ալ ասանկ խույրուխը
բալթօ չէր հագեր կէնճը ...

— Չէ ճանըմ տուտուս, աս տարուան
մօտաներէն ...

— Ինչ խառնախառն էնէ, ներսիդիս չի
փակաւ ...

— Էյ բէք էյի մատմազէլ, մաք ֆէռլան
վերէյիմ ...

Երկուքը մէկ կռակներն կ'անցնեն բալ-
թօները:

— Քա ա՛տ ինչ է ... չայլախ դառցաք,
քա սա նայէ իտարէլի ըլլայ տէյի թեւ չեն
չիներ ... հայտէ՛ ... հազըր իշին ասանկ
կըլլայ ...

— Աս ալ մօտայ է տուտուս, մաք ֆէռ-
լան կըսէ կոր ...

— Հէ՞ ...

— Մաք ֆէռլան ... անցած տարի ալ
կը հագնէին կոր ...

— Ֆռէնկի տէրտէր դառցաք եավրում,
վազ անցէք, տի՛ւզ տի՛ւզ, ծո՛ տիւզ բալթօ
եօգ մու տըր ... քա կիւլիւնեաին հաղա-
ծը թարիֆ չընէ՞ք ...

— Ձգէ ճանը՛մ, մատա է նէ առնենք
պիտի, աղուոր չիրքին աս աս է ...

— Երկու աչուընին քէօռնա քի զօռօվէն
պիտի չիրքինցունեն ինքզինքնին քա՛ ...

— Տուտուս, համոզուէ, նայէ ի՛նչ զէն-
կին կերեւանք կոր ...

— Ձկնկին երեւայիք նէ աս տարիքնուդ
վրաս եիւք չէիք մնար ... ես չեմ խառ-
նուիր ամա, հարերնիդ տեսնա նէ թէմիդ
մը կը դրոշմէ ձեզ ...

— Դուն բազարըլըր ըրէ տէ անկէ ան-
դին մի խառնուիր ...

— Էյ պիթմիշի նէ՞ տիր պունլարըն:

— Իքիսի, ալթը լիռա պիր քառթ մա-
տամ ...

— Էյ հավէսնիդ առիք եա՛ ... քա-
լեցէք ...

— Ինչե՞ր կըսես տուտուս, դուն ալ գին
մը տուր ...

— Կէսը տամ նէ նորէն չօգտեր կոր ...
խապա՛ր էք ...

— Սման տուտուս, մարդուն երկու ա-
նուշ լախըռտը ընես նէ պէթի կը ձգէ ...

— Աս մուշմուլա սուռաթովս չեմ կրնար
ատ խալթը ուտէր եավրում ...

— Էյ մեռնիմ նէ կռնակս պիտի անցու-
նեմ քի ի՛նչ ըլլայ նէ ըլլայ ...

— Քա ճանը՛մ արուններս ճէվլլան ընեչ
մի տաք կէնէ, չիգայ կըսեմ կոր ...

— Տուտուս, առնենք կըսեմ կոր, ետքէն
բիւշման պիտի ըլլանք ...

— Կեցիր նայիմ ... ծո՛ պանա պադ
բալթօճու, քա նէ օլուր, գըզլարըմ իվ իվ
կէլիօրլար քի ալալըմ տէյի, չիմտի վեր կըռ-
նակներն անցունեն տէ, ետքն պապալարը
բարայը կէթիբիւր ...

— Օ՛ ... եօգ մատամ, ֆազաթ, պիր
քառթ վերինիդ, պիդ սազլարըզ ...

— Էյ օլուր, նա՛, ըսելով, քառորդ մէ-
ծիտ մը վը դնէ մարդուն ձեռքը, նա՛ պիր
չէյրէկ իսթէտին, ալ, գուսուրը եառըն ...

Մարդուկը հասկնալով թէ ինչ աստի-
ճանի մարդոց հետ է գործը, բալթօները
կը ծալէ, քառորդը ետ կուտայ եւ ուրիշ
յաճախորդներու հետ կսկսի զբաղիլ:

— Հրամանցի՞ք հիմա, անլման բիճեր,
մարդը էյլէնճէի զարկաւ գործը ... ա՛խ ...
վոթկած շուներ, պէրէքեաթ վէրսին, ձեզ
ծառքէ հանեմ, մարդու շիրին ցուցնեմ տէ
թէզ կլտէն կարգեմ տէյի աս իսքէնճէները
կը քաշեմ կոր չէնէ, չէքէրին ճուվայը ծա-
կեմ կռնակնիդ պիտի անցունեմ ... տէ քա-
լեցէք տուն իյնանք տէ հօրերնուդ հասկու-
ցուցէք ... ես ասանկ պէսլմէի թէլլալի
պէս ձեզ առջիս ձգեմ տէ չեմ կրնար սօ-
խախ սօխախ պտըտիր ... կըսէ ու առանց
գնում մը ընելու դուրս կելլան վաճառա-
տունէն:

X

Հիմա որ կարդացիք այս բնական պատ-
կերը, վստահ եմ թէ շատեր պիտի հաս-
տատեն եւ կամ պիտի խոստովանեն տեսած
ըլլալ նմանօրինակ ընտանիքներ, որոնք ա-
շափոանկաի սիրոյն խախը ու ծանակ կըլ-
լան վաճառատուններու մէջ: Աւելի աղէկ
չէ, պատմաբէշով պտըտիլ քան թէ մաթ
ֆեռլանի մարմաջով խախը ըլլալ թեզկեսան-
ներու մօտ:

ԱՄՕԹ ... :

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԿԵՍԱՐԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ

Ուրբաթ գիշեր մը մեր դրացիներուն հարսանեաց հանդէսին հրաւիրուեցայ: Մեծ բազմութիւն մը լեցուած էր սենեակը: Քանի մը ժամուան խօսակցութենէ վերջ՝ հիւրերէն մին հանդէսին նպատակը բացատրեց ու ասոր վրայ սկսան դահլիճի եւ ֆեանեաւ մը ընտրել ներկայներէն: Երբ ընտրութիւնը լմնցաւ, ֆեանեան նստաւ աթոռի մը վրան, զրան մօտ: Տեսնելու արժանի էր նորընտիր քեահեանին կոչականները: «Տո՛ւ, սուրճ բեր, կրակ տուր, նուազածուք ներս թող գտն»: Այս վերջի հրամանին վրայ նուազածուներու խումբ մը ներս կը մտնայ ու կ'սկսի շարդիներ նուազել: Օղիներ երեւան կուգայ, ամէն ոք պարտաւոր է օղի խմել ու մաղթանքներ ընել: Մինչեւ ժամը 4 1/2 այսպէս կը շարունակուի, ուրկէ վերջ տարեցները կը ցրուին, երիտասարդները կը մնան, որոնք բազմազան աղանդներնով ու ըմպելիներով լեցուն սեղանի մը շուրջը կը ընդլորուին, կ'երգեն ու կը պարեն:

Արշալոյսին բաղնիք կ'երթան այս երիտասարդները եւ փեսացուն, մագրութեան գործը լմննալէ յետոյ դարձեալ նուագի առաջնորդութեամբ պարելով տուն կը դառնան ու կը ճաշեն:

Կիրակին իր լալոր ժամերով նուիրուած է շնորհաւորութեան եկողներուն:

Երկուշաբթի կանոն ըստ սովորութեան կնքահայրը բերելու կերթան իր տունէն:

Այս անգամ կնքահայրը կ'սկսի հրամաններ տալ: Այս վերջինին հրամանովը աղջկան տունը կ'երթան, ասիկայ ուրիշ բան չէ եթէ ոչ լուր տալ թէ՛ պարտաստ թող գտնուին որ ժամ մը վերջ հարսնցուն պիտի տանին:

Վերադարձին փեսան հագուեցնելու կը դրադին, կնքահայրը կը հանէ հին վերարկուները ու նորը հագցնելու համար, երգեցողութեամբ ուրիշ սենեակ կը տանին, եւ կ'սկսին հագցնել հագուստները: Պէտք է որ ամէն փեսայ սեւ հագուստ եւ բարտիւսի մը հագած եւ կռնակը ֆեֆիյե մը նետած ըլլայ, ձեռքը ճերմակ ձեռնոց ու ձեռնոցին վրայէն քանի մը մատնի (°), նոյնպէս փո-

քին ֆալօշ անհրաժեշտ է, եւ գրավաթը երկու հատ, մին երկայն եւ միւրը կըր, վրայէ վրայ անցած: Ինչ է գաղտնիքը գիտէ՞ք, այն օրը միայն չարչրուիլ եւ ատկէ վերջը այդ տեսակ չարչարանք չ'քաշելու համար:

Իսկ հարսը, ընկերուհիներուն երգերէն յուզուած միշտ կ'արտասուէ: Հացը դեռ չը դադրած փեսան կը հասնի, աներոջը ձեռքը կը համբուրէ ու նուէր մը կ'ընդունի: Ժամ մը յետոյ հարսն ու փեսան հետեւորդներով եկեղեցի կ'երթան ուր պսակի խորհուրդը կը կատարուի, ուրկէ յետոյ ամէն մարդ իր տեղը:

ՀՐԱՆԴ ՍԷՎՏԱՆԱՆ

«ԲԻԻՋԱՆԳԻՈՆ» Ի

ՏԱՍՆԵՐՈՐԴԻ ՏԱՐԵՄՈՒՏԻՆ ԱՌԹԻԻ

Ամէն անոնք որոնք քիչ շատ տեղեկութիւն ունին օրագրութեան մը դժուարապահանջ գործունէութեան եւ օրը օրին հետեւած են Մամուլին, անշուշտ պարզ հանդիսատես մը չեղան «Բիւզանդիոն»-ի մեր առաջնակարգ օրաթերթին Տասներորդ տարեշրջանը վերսկսելուն:

«Բիւզանդիոն»-ի մէկ թիւէն ցայսօր հրապարակ ելած անձնիւր օրինակ ցոյց տուաւ թէ թերթը հանրային բարոյականի, տնտեսական օգտաշատ գիտելիքներու, գրական պատասխաններու, ուսումնասիրութեանց, ինչպէս նաեւ ստոյգ աղբիւրէ՝ բղխած լուրերու եւ անաչառ քննադատութեան ընդունարան մը եղաւ:

Իր Տէրն ու Տնօրէնը Քէչեան Բիւզանդէֆ. պէտք է խոստովանիլ թէ այս բարենախանձ յաջողութիւնը կը պարտի իր անսոյթաք սկզբունքներուն, ինչպէս նաեւ անզուգական կարողութեան, որով ուրախ ենք յայտարարելու թէ այսօր իր թերթը կոյս է եւ վերժ լրագրական շահամու պայքարներէ:

«Հանրագիտակ» պարտ անձին կը համարի շնորհաւորութիւններու փունջ մը նուիրել իր մեծայարգ պաշտօնակցին, ի նշան ջերմ համակրանաց:

ԻՐԻԿՆԱՄՈՒՏԻ ՁԳԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեռուն,
Ողիմպոսի գագաթները սառնադուն,
Ամպիկներու բիշ ծուկներ յուրօրեան,
Մութ կայսրոյ մը կ'երանգեն:

Հոն դաշտին մեջ
Ժիր մշակը սիրաւենց
Թոյրի թոյրի այս պահերէն գիւնովցած
Սերը կ'երգէ բոցաւճարձ:

Հորիզոնին վրայ,
Բլուրներուն կողերն ի վար կը սահին,
Վերջապուսային
Դեղին ցոյրեր մահաւերձի շունջին պէս,
Եւ արեւս

Հառաչ մը կը թռի ու կը հեծեծայ
Մինչ աշնանային այդ արեւէն ոգեւար
Սառած յոյս մը կուգայ վար:

Տա վիրխարի բարդիներուն ստուերին տակ
Մարմանդին մեջ կանանց
Մանիշակը գիսահակ
Ու շուշաններ ձիւնաբանց
Մեխակներու բուրնոս հասկեր փողփողուն
Աննետուկի բիշ աշուկներ
Ու յամիկի յուզում կուրծքէր տարուքեր
Սեր, միայն սեր կը գեղուն,
Արարչագիր ֆերքումներու հսկայ հաստներ
վեհունի

Հոս ֆերքողը թող խօսի. —
« Հովսիսն մի խորշ մ'եռան մի ֆող
Բիրս շինականն է ֆերքող.
Ծաղկունք բնութեան եւ ֆերքումներ
Ոյր ծոցն հանգչի անպատում սեր »:

Ու Ողիմպոսի այդ ապաշիր գագաթէն
Ձիւնի կոյսեր շուսաշող
Մեզ կը դիտեն խոր ազդեցիկ վեհ նայում-
ֆով ապաֆեն

Կարծես թէ սիրս մ'ունենային տոփող
Մեր սերերուն ու յոյգերուն կարեկից
Ամոնելուն համար ցաւերն ու կսկիծ:

Խոռովներու մեջ հեշտագին
Կը սուգի սիրս, ու արիւնգի տարաւ խա-
չեր մտերիւ

Հոգիս մեջ կը մարին
Մոռցած աշխարհը երազներու կը փարիւ:

Ո՛վ սեր, ո՛վ սեր ահաւոր
Պրիմաւիդ մեջէն տեսայ կեանք մը նոր.
Իբրեւ մայր մը բաց ֆու ծոցդ, ահա՛ կու-
գաւ
Պատմութեանդ չընես զիս զոհ մը խաւշաւ.
Ջերմութեանդ մեջ չի հալի՛ւմ վաղածաւ...:
Տրապիզոն ԵՐ. Մ. ՃԻԻՀԵՐԵԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Անաբազար. — (Գործակալութիւն).
Խնդրում 41 թիւէն միայն 16 հատ ունե-
նալով ի ձեռին, զրկուեցաւ, մնացեալները
յաջորդաբար կը զրկուին:

Պրուսա. — Կը խնդրուի ժամանակը լը-
րացած բաժանորդներէն ընդ հուլի հասցը-
նել իրենց բաժնեգիրը, որպէս զի շարու-
նակենք թերթերը:



ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1803

Կ. Պոլիս, Մերձան փողոց, թիւ 57

Օսմանեան Պատմութիւն մինչեւ մեր օ-
րերը Մ. Աշտեան Դր. 4

Գոհարմատենիկ, Երկսեռ վարժարան-
ներու ուսանողներու ընթերցման արժանի
լաւագոյն դասագիրքը Դր. 5

Չրուցատրական Ընթերցարան. տարրա-
կան կարգերու. իր տեսակին մէջ բոլորովին
նոր Դր. 3

Մանկավարժական Բերականոնքիւն. Գ.
մաս. պատկերներու վրայ իր աննման ոճովը
կը սորվեցնէ Հայերէն Բերականոնքիւնը
Դր. 4

Հայերէն Լեզու կամ Վարժութիւն Գրա-
բարի, Կ'ուսուցանէ գրաբարը հասկնալ ու
թարգմանել, առանց հոլովները ու բայերը
ի բերան սովորեցնելու: Դր. 4

ԿՍՐՃ միջոցի մէջ Անգլիերէն կամ Յը-
րաններէն սովորի փափաքողներու միակ
գիրքը ՄԱՅՍԹԵՐՍՇԱՖԹ ՍԻՍԹԵՄ. 15
տետրերու գինը Դր. 30

Առողջաբանական Մարմնամարզութիւն.
45 պատկերով, առանց գործիքի. ամէն
տուն պէտք է ունենայ այս գիրքէն Դր. 5:

ՈՏԱՆԱԽՈՐ

ԷՐԻԿ ԿՆԿԱՆ ՄԻՋԵԻ

— Չար չար չար չար չարիւն իս կրնիկ
 սուր պաց
 Անճառէ կուգայ վրաս կը յոխս Ե
 քալի քաց
 = Կըռոյ ծանիդ, աւ ո՞ր վախիթ
 տուն կայ Ե
 Կինով ֆօքթ ֆիչ մը ճամբան
 քեզ ֆաշէ:
 — Սէ տունարդ ուրի՞ Ե Ի՞նչ
 կայ կենե
 Կիծած էղիր ալ պըթիւն եւ
 Ե ֆենե:
 = Մէյ մալ ինծի հարցուր ճայինք
 ֆեզ կ'ուզե՞մ
 Ծառֆէ կանե միւրդ քիւմի
 կը կըզեմ:
 — Ի՞նչ Ե էղեր ֆիչ մը ուշ եւ
 մընացեր
 Հախըսըյով վախիթնիս ալ
 Ե անցեր
 = Աս ասուծուն իր մեկ գիշեր
 չէս ֆաշուիր
 Ի՞նչ փաս մարդ ես ֆի կըսուր մը
 չէս ֆաշուիր
 — Չարիւն ըրէ կերակուր պեր
 գառնըւ աճ
 Չենե հիւս կը տըփեմ ֆեզ
 վըկայ իսաչ:
 = Չիսէս կոր ֆիւ պան մը չունինք
 ուտելու
 Միկնէ անգամ չոր հաց մը
 չան նետելու:
 — Ինչո՞ւ համար աստուն չըսիր
 ինծի դուն
 Քի իրիկուան չարշիեն կամ
 կանուիս տուն,
 = Ինչո՞ւ ըսեմ իրիկուան
 կինով Ես
 Աստուանց ալ մահմուդն սերսեմ
 պէյնով Ես:
 — Նանֆօր կրնիկ չեզուդ ֆիչ մը
 ֆեզ ֆաշէ

Աս ամեն օր կերած հացըդ
 կէս ֆաշ է:
 = Կէս ֆաշ հացն ալ շա՞ս կը տեսնաս
 կոր ինծի
 Չըսեմ հեմեն չեզուդ պերանդ
 կըռընծի:
 — Պիտի խըմեմ ամեն գիշեր
 ըռախին
 Մարդ չը կընար պան մը ըսել
 իմ հախին
 = Խըմե պապամ խըմե միկնէ
 ու ճաթիս
 Տուն մուր մընէս ֆրսուած
 իմին ճակատիս
 — Դուն ալ կրնիկ չէս իմ կըխուս,
 պէյս Ես
 Չիւնֆի արթըս չիւնի դուս
 Ելա Ես:
 = Անանկ Ե նե Թալշաննիւս
 պօշ տեղը
 Ալ մի յոգնիր ասանկ մարդոց
 ալ դեղը
 Չի գըսնուիր՝ օսիկներդ
 ֆեզ պահե
 Խույլուն խույեն վազ պերոդն
 ալ մահ Ե:

Քեռթեց

ՍԿԵԼԱՐ

Ե. ԳՈՒՅՈՒՄՅԱՆ

=====

Ճաշարանի մը մէջ:

Երկու բարեկամներ ճաշարան մը կը
 մտնեն, կառսօնը մօտենալով իրենց,
 կը հարցնէ.

— Ի՞նչ կը հրամմէք տիարք.

Մեկը — Ինծի պիֆթէ մը բերէք.

Միւրը — Ինծի ալ պիֆթէ մը, բայց
 աղէկ ըլլայ.

Կառսօնը — (Խոհարարին դառնա-
 լով) Երկու պիֆթէք ... բայց մէկը
 աղէկ ըլլայ:



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Իզմիրէն մեզ լուր կուտան թէ՛ մեր անգուգական (°) ֆօքսանի երգի-ծաբանը Յ. Ալփիար, իր սիրած բառին՝ flirte գործնական դասնթացքը հելլէն ու հիի մը հետ փորձած պահուն, օրիորդին եղբորմէն զորս դու պատուիրեցեր տփոց մը կուտէ։ (Այս հաշուով յաջորդ շաբթու իր յօդուածին նիւթը պիտի ըլլայ «Գլխուս եկածները» Ծ. Խ.)։

— Այ-Սթէֆանոսէն մեզ կը գըրեն թէ՛ վաթսւննոց երիտասարդ մը քառորդ տարիքը ունեցող ու հիի մը հետ պտտած ատեններն, օրիորդին նըշանածին վրայ հասնելովը խեղճ մարդուն տարիքին վրայ զգալի յաւելում մը եղած է։

— Լանկայէն կիմանանք թէ՛ տեղացի օրիորդ մը անցեալ գիշեր հարսնութեան թէրփէշէն գլուխը երբ ընտանիքը հարսանեկան նախատօնանքը կը կատարեր, պախալի աշկերտ մը լուր բերեր է թէ հարսնիքը տարի մը եւս յետաձգուած է ...։ (Վախ ես վրում... քնացիր քի մեծնաս. Ծ. Խ.)։

— Սկիւտարի վարժարաններու տեսչութեան համար մէկ քանի ստորագրութիւններ մենէ կը խնդրեն ծանուցանել թէ իրենց զաւակները երկոտանի ըլլալով ծեծի պէտք չունին, խօսքով կը քալեն։

— Նոյն թաղին Եէնի-մահալէի վարժարանէն, լաստիկ չունենալուն համար տուններին զրկուած մէկ քանի աղքատիկ մանկտիներու համար ծնողաց կողմէ կը խնդրուի որ եթէ կարելի է մէկ մէկ սպունգ գործածեն նեխերը մաքրելու համար, փոխանակ

վեց գէրը կռնակներն տալով վտարելու վարժարանէն։ (Պատ. Հոգաբարձութեան կողմէ մէկ քանի տանեակ բաւուած յատկացուիլը աւելի բռնաթիք ըլլա՞ր արդեօք. որոյ գումարը 70 զրուշը չ'անցնիր. Ծ. Խ.)։

— Բերայեն մեզ լուր կուտան թէ՛ այս տարուան թառթալ-խուշի բալթօները մինչեւ անգամ սպասուհիներուն կռնակը տեսնուած ըլլալուն եիւքերուն պուճախը նետեր են կարգ մը նորոյթասէր մատմալէններ։

— Ատաբաղարէն մեզ հասած թղթակցութեան մը մէջ ուրախ ենք յայտարարելու թէ՛ Ս. Հրեշտակապետ թաղի վարժարանը իր բարեկեցիկ վիճակով նախանձը շարժեր է կարգ մը փորի ցաւ ունեցող հակառակորդներու։

Անցեալ օր Մեծ կղզիէն Պոլիս եկող առաւօտեան շոգենաւին մէջ շիքով թիւնը պատանքի պէս վրան փակցուցած օրիորդ մը գաղիէրէն լրագիրը հակառակ կողմէն կարգալուն պատճառաւ ներկաները այնքան խնդացեր, զուարճացեր են որ մէկ ժամուան ճամբան շին զգացելու (Oculisteի մը դիմելը կը խնդրեաք. Ծ. Խ.)։

Մագրի գիւղի մեր հասնաւոր թղթակցէն կը տեղեկանանք թէ՛ կարգ մը տիկիներ գիշերնոցով նպարավաճառին խանութը կը գիմեն։ (Նոյն խօսքի մէջ գիշերնոյնիւր սաթէն լիւքս ալ ըլլայ նորէն չի նետուիր. Ծ. Խ.)։

Արսօնաշէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆ ԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ
Պապը ալի ճաւոտեսի, քիւ 53



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անհրապիւն մասերն եղան մօին, ուղեղին, ողնուղեղին և ֆօսֆատներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն. շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դաշկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը դորժածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէից մթերանոցներու քով:

50—15

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵՂԵՆԱՅ

Արանց, Կանանց և Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը չհաճ է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուատներու, կանանց խելոյններու և տղայոց չիք և դիմացկուն ֆօքիսներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—10

ԶՈՒԿԸ ԾՈՎԷՆ ԴՈՒՐՍ

Կագմով փատառողջ, չիղերով տկար Մեծ ու փոքրերուն յաւետ օգտակար. Բուժիչ, կազդուորիչ դեղ մը անուանի եթէ կայ՝ ճրկան գուտ իւղն է անի: Եւ հրաշագործ այդ ճուղն է Մօրիւն Իր իւղն ըմպողը կ'ստանայ աւիւն. Կուտայ ախորժակ, ոյժ, քուն, եւ իսկոյն Կարմըրին այտեր խնճորի հանգոյն: — Բայց աւա՛ղ որ իւղին այդ Մօրիւն ճրկան Անխարդախը հոս ծախողներ քիչ կան... Հաւագոյն տեսակն անոր, քաղցրահամ, Ծուետի եզրերէն շիտակ, այս անգամ Բերեյ տուած է Հեռոն Կիւմիւշեան, Որ՝ ընթացքին մեջ մօտակայ նմրան Իր դեղարանի յաճախորդք ամէն Ուզածնուն ջափ գան, առնեն ու խըմեն: Եւ — ինչպէս ամրան հեղձուցիչ տաքուն «Միջատասպան»ով գրտած ունուշ քուն, — Ձմրան ցրտաշունչ խիստ օրերուն ալ Կարենան առողջ կենցաղ ունենայ, Եւ միշտ ստիպուին շիտակ դիմելու. Առ Լ. ԿԻՄԻՆԵԱՆ, ի Զարշը Գաբու:

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ԵՒ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐԾ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնայի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և աղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաև ճերմակեղէններ, փանթէղիներ և թօափէններ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամփօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն գոյաւարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ

50-6

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։